

շարժիչը, խարերայ և անստոյդ կը կո-
չեն զասիկայ .

Spes vaga pectora ludit.

Պատրանք սրտից՝ Յոյս յեղյեղուկ։
Գոլինս անգղիացին՝ փափուկ նայուած-
քով, դիւթիւ ժպիտով և խարտեաշ
մազերով Աստուած մը կ'ենթադրէ ըզ-
թոյս :

Ա. Ր Կ Ա. Ծ Ք

Ի Խորտակման հաշու միոյ ¹.

Ալիքն զիզացեալ էին, և ծովն առ-
հասարակ փոխեալ էր 'ի փրփուր եռա-
ցեալ, և հրազէնք ² ամենակալին որո-
տալով որոտային, և երկիր սասանէր։
Ի հարկանել նաւուն ընդ յատակ՝ ան-
դէն և անդ խորտակեալ փշրէր որպէս
ունդ յարդի հոսեալ հեծանոցաւ։ Այլ
յառաջ քան զայն նաւապետն վազվա-
զէր 'ի խելս նաւուն, բարձեալ երկուս
ինչ փոքունս, մէն 'ի միում բազկի։ ։
զմանկիկն իւր և զդստրիկն փոքրիկ։
Երկայն էին վարսք նոցա և ծածանէին
զերեսօք նոցա . և մինչ այն ինչ պրծեալ
զնա համարէաք՝ զթեալ անկաւ . այլ
պնդապինդ ունէր զնոսա 'ի գրկին։ Իսկ
ամբոխնաւորդացն . աւազ թշուառա-
կանացն . կոհակք հարեալ կորզեցին
զնոսա . կէպ ջախջախեցան, կէպ կուր
եղեն փրփրացեալ ալեացն, այլք ան-
կան դիտապաստ . շունչն ցանկալի ե-
լիք սարտեաւ 'ի նոցանէ . ոչ ոք 'ի խոր-
տակեալ բեկորոյ անտի՝ յորոյ վերայ
կոռւեալն կայր՝ ոստեաւ 'ի տախտա-
կամած անդր, բուռն հարկանել զձե-
ռաց որ կարկառէին հասանել 'ի նոսա .
այլ յորսայսեալք անկանէին և կային
մնային մեծաբաց աչօք : Իսկ նաւապետն
կոռւեալ կայր միայնակ կենդանի։ Ա-
զերսէին նմա և ասէին . Նաւապետ, ե-

թէ սիրես զԱստուած, ընկեա այսր
զտղայքդ : Իւ նա ընկէց զմին, զղեռա-
բողբոջ մանկիկն երկամեայ . բայց ալիք
ծովուն կորզեցին զնա 'ի լպրծուն դա-
րափանցն և ընկլուզին 'ի խորս . տե-
սին զնա, լուան զձայն զճիչ աղաղակի
նորա . Յայնժամ ել կանգնեցաւ, ամ-
բարձ զտղայն զմիւս . և ամենայն ամ-
բոխ ժողովրդեան մերոյ կարկառեալ
զգորովալիր բազուկսն՝ աղաղակէր . ըն-
կեա այսր, ընկեա այսր . և նա արար
այնպէս . պարզեաց զաջ իւր 'ի կուրծս
կոյս գեղջ երիցուն . և 'ի նմին պահու-
ալիք մեծակուտակ զեղաւ 'ի վերայ նո-
ցա : Եւ որք տեսինն զայն 'ի ծովեզե-
րէն՝ ասէին, եթէ ընկլուզին ալիք զնըշ-
խար նաւուն և մանր խորտակեցին, որ
պէս կին զի արկեալ զձեռան 'ի հայս՝
մանրեալ փշրիցէ զշառաշիղ աղի 'ի վե-
րայ ուռուցելոյ հացին : Զգեալ հանաք
զմարդիկն մեր . երկուք 'ի նոցանէ մե-
ռեալք էին, կոծեալք 'ի ծովէն, և գր-
լուկք նոցա անկեալ կախեալ կային :
Բազուկք գեղջ երիցուն մերոյ թա-
փուրք էին . քանզի ալիք կորզեցին ըզ-
գեղցիկն, զգեղցիկ գառնիկն : Բա-
զում անգամ տեսանեմք արդ զերէցն
մեր կանգուն առ երի տապանի աղջ-
կանն փոքրկան . բայց նա անպարտ է 'ի
վնասուէն, անպարտ է 'ի վնասուէն :

ԻՆՃԵԼՈՒ ԱՆԴՂԵՑԻ :

Կ Ա Լ Կ Ա Դ Ա

Բարեկամ Հնդկաստանի ըսուած
անդղիական օրագիրը հետեւեալ տեղե-
կութիւնները կու տայ կալկադայի վը-
րայօք :

« Գիտնալու է որ կալկադա լոն-
տրայի նման քաղաք մ'է, կեղրոն վա-
ճառականութեան, և զետին ափանցը
վրայ երկու կողմէն արուարձաններ ու-
նի . կալկադա իրեք մեծ մաս կը բաժ-

1 Grace նու Սուտէրլէնտայ :

2 Հանթք կայծականց :

1 Հեղինակն՝ քաղցեալ բազուկս ասէ :

նուի . բուհն կալկադա ըստածք , Արուշարձանները որ կալկադայի հետ Հուկի գետոյն նոյն կողմն են , և հոն կը բնակին մեծաւ մասամբ Եւրոպացիք ու Մահմետականք , և Հովրառն որ Պենկալայի մայրաքաղաքին Լամպէտհը¹ կը բնայ ըստիլ : — Այս երեք թաղերս միատեղ այնչափ ընդարձակ չեն՝ որչափ որ Պոմպայի իր 4500 հեկտար տարածութեամբ և 800000 բնակչօքը , և կամ որչափ Մատրաս իր կէս միլիոն բնակչօքը . սակայն կալկադա , առանց իսկ հաշուելու Հովրահը , միլիոն մը բնակիչը ունի . Վերջին աշխարհամարին նայելով , վաճառականաց բնիկ թաղին մէջ միայն՝ բնակչաց թիւն 378066 հողի է , որոնցմէ 41067 Եւրոպացի և Ամերիկացի են , 10950 Եւրոպական – Հնդիկ , 33 Յոյն , 722 Հայ , 1443 Ասիացի . ասոնցմէ զատ ուրիշ զանազան ազգեր ալ կան , ինչպէս 548 Հրեայ , 113 Փարափ , 37 Ափրիկեցի , 408 Չինացի , 113365 Մահմետական և 249380 Հընդիկ : Բոլոր այս ժողովուրդս կը բնակի 15976 ազիւսաշէն տներու և 42917 հիւղերու մէջ : Այս վերջին բնակչաց թիւը քիչ է , որովհետեւ ընդհանրապէս տասը հնդիկ մէկ տան մէջ կը բնակին , և դարձեալ շատ մը Եւրոպացւոց բնակութիւններ կան ուր անթիւ ծառաներ կ'ապրին , առանց համրելու դպրոցներ և բազմամարդ պանդոկները : Անցեալ տարի գրեթէ 23000 հոգի մեռան , որոնցմէ 100ին 22ը մաղձացաւէն և մէկ մասն ալ ծաղկի հիւանդութենէն :

«Կալկադա , Հնդկաստանի մայրաքաղաքն և Պենկալայի գահանիստը , միայն պալատներու քաղաք չէ , ինչպէս շատերը կը կարծեն , այլ ստոյգ արևելեան Լոնտրան մը իր գետովը , վաճառական ընկերութիւններովը և գործունէութեամբը : Ինչպէս Լոնտրա՝ հոն ալ կան նաւաշինութեան աւագաններ , մթերանոցներ , վաճառանոցներ և ու-

¹ Լոնտրանի մեծ թաղ մ'է գետոյն մէկալ կողմը :

րիշ զանազան շէնքեր բազմաճիւղ վաճառականութեան մը զվասաւորներուն կամ ներկայացուցիչներուն համար . կան նաև մեծ պանդոկներ , ուր անգղիացի զբամագումարոց գործակալքն առուտուր կ'ընեն հնդկաստանցի վաճառականներու հետ :

«Ասոնցմէ զատ կը գտնուին հասարակաց շէնքեր . ինչպէս փոխարքային պալատը , գատաստանարանը , հասարակաց ժողովարանը , փողերանոցը , որ աշխարհիս մէջ ամենէն բանուկը կը հայ ըստիլ . մաքսաստունը , հեռագրոց և նամակաց ուագ պաշտօնարանը և վերջապէս եւրոպացի մեծամեծաց տները : Իսկ Հուկի՝ ծովէն հարիւր վամբսուն մղոն , և վաթսուն ալ կալկադայէն հեռու , Գանգէսի երկու գէմաղէմ ճիւղերէն կը ձեանայ . զոր Հնդիկը բուն գանգէսը կը համարին , այն նուիրական և օրհնեալ գետը որ իրենց նիլոսն է : Սսիկա իրաւցընէ Դամիզ գետին գաղափարը կու տայ , որովհետեւ ունի անոր պէս իր վաճառքը թափելու , խարիսխ ձգելու տեղերը , նաւերը , մակոյկները և նաւաքարշերը : Սակայն պէտք է խոստովանիլ որ Հուկիի և Դամիզի մէջ միայն նմանութեան կերպարանք մը կայ , որովհետեւ երկու գետերուն նաւաստի և աշխատող ժողովուրդը բորբոքին իրարմէ կը տարբերի . Գանգէսի վրայ ամէն ազգերէ մարդիկ կը տեսնուին , իսկ ՚ի Դամիզ միայն Եւրոպացիք են : Բայց զվասաւոր տարբերութիւնը ասոր վրայ չէ , անկէց աւելի պէտք է զանազանել իրարմէ երկու գետերուն նաւարկութիւնը :

» Գանգէսը անտարակոյս աւելի լայն գետ մ'է ՚ի կալկադա քան Դամիզը ՚ի Լոնտրա , և տասնապատիկ աւելի ջուր ունի , թէպէտ և հարիւր անգամ ալ աւելի աւազուտ է : Անոր համար շատ ժամանակէ ՚ի վեր նաւարկութիւնն այնշափ գժուարացած է որ նաւ մը ամենայն զգուշութիւն ընելով հազիւ կը բնայ խարիսխ ձգելու տեղը հասնիլ : Իրաւ է որ բազմութիւն նաւաքարշերու կ'երթան եկող նաւուն օգնութեան ,

բայց ծախքն ալ շատ մեծ է . մտածեցին
որ դարման մը գտնան այս բանիս , և
անոր համար զետին աջ եղելքին ճիւ-
զերէն մէկուն վրայ , որ Մադրահ կամ
Մադվահ կ'ըսուի , սկսան նոր նաւա-
հանգիստ մը շինել . կ'ըսեն թէ պէտք ե-
ղած ստակը ճարուած է և քիչ ատե-
նուան մէջ զարմանալի երագութեամբ
դործը առաջ գնաց : Այս նոր նաւա-
հանգիստը պիտի կոչուի Նաւահան-
գիստ Գէննինկ , որ 27 անգղիական մը-
ղոնի երկայն երկաթուղեաւ պիտի միա-
նայ կալկադայի հետ : Վաճառքները շո-
գեկառքով քաղաք բերելուն ծախքը
եռապատիկ նուազ պիտի ըլլայ քան
թէ բեռնակրով բերելը » :

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Ոսկերովք Ուրալայ : Ուրալ նա-
հանգին մէջ չորս ոսկեհանք կայ տէ-
րութեան վերաբերեալ . և են Եգաղե-
րին – պուրկ , Պօկոսլովզքի , Զլադուս-
քի և կառապլակոտադ . առաջինը ա-
մենէն հինն է , 1754ին գտնուած . այն
թուականէն մինչև 1864 այս հանքէս
հանուած է 1975 բուտ (իբրև 32000
քիլ.) :

Պօկոսլովզքի , որուն փորումը սկսած
է 1823ին , հանուած է 1422 բուտ (որ
է ըսել 23280 քիլ.) :

Կառապլակոտադ 1823էն 'ի վեր 386
բուտ (մօտ 5000 քիլ.) :

Ամենէն նորագոյնն է Զլադուստոյի-
նը , որ և ամենէն շահաբեր . 1825ին
գտնուած է , և արդէն տուած է 1906
բուտ (իբր 3200 քիլ.) :

Առանձնականաց հանքերն 1825էն
ինչուան 1864 տուած են 6347 բուտ
(103880 քիլ.) . բոլորը մէկտեղ 13546
բուտ (իբրև 196000 քիլ.) :

Գործածութիւն հաւերթի յԱնգլիա :
— 1866 տարւոյն առաջին հինգ ամիս-
ներուն մէջ 196,000,000 հաւերթէն ա-
ւելի բերուած են դրսէն յԱնգլիա . ին-
չուան 1861 բոլոր տարրուան մէջ բե-
րուածներն այս թուոյս չէին հասած .
առջի տարին (1865) դրսէն բերուած
հաւերթներուն թիւը այնչափ աւելցաւ
որ թէպէտ քիչ մը շափազանց կ'երևայ ,
օրը միլիոնի կը հասնէր . իսկ անցեալ
տարւոյն միայն մայիս ամսոյն 3 օրուա-
նը մէջ բերուածներն՝ 56,000,000ը ան-
ցան . 1854ին մաքսատանց մէջ հաւ-
երթներուն վրայ դրած գինն էր՝ 120
հատին 5 ֆրանք 60 հարիւրեակ . բայց
ուրիշնիւթոց պէս հաւերթներուն դինն
ալ այն ատենէն 'ի վեր սուղցած է , և
վերջի վեց տարիներուս մէջ նոյնչա-
փին աժէքը 7 ֆրանք և կիսէն աւելի
բարձրացած է :

Օրագրիս փետրուար թուոյն 64 երեսը , սիւ-
նակ առաջին , տող առաջին , Կաթանայէլէլի գրուած
անունը ուղղելու է Կաթանայէլ ւի . մարտ թուոյն
67 երեսը , երկրորդ սիւնակը , տող 23 . Սաբէն
Ագուիուր տպուածը կարդալու է Մարիու Ագուիուր .
նոյն թուոյն 96 երեսը , առաջին սիւնակ , տող 6 ,
Պ . Սաբէնս Տիուրիուն գրուածն ուղղելու է Պ .
Սաբէնս-Տիուրիուն :